



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի կողմից 2020 թվականի 3-րդ եռամսյակում 21/20 ծածկագրով «Սպանդարյան ՀԷԿ-ի գնդային փականի սրահի և դրենաժային սրահի հատակի սալիկապատում» մրցույթի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ 2021

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի գնումների առանձին գործարքների մոնիթորինգի արդյունքները

Մոնիթորինգի իրականացման հիմքը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում №1) հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգ:

Մոնիթորինգի օբյեկտը՝ «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ (այսուհետ նաև Ընկերություն):

Մոնիթորինգի առարկան՝ Ընկերության կողմից 2020 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում իրականացված գնումների առանձին գործարքները:

Մոնիթորինգի նպատակը՝ Ընկերության կողմից կատարված գնումների առանձին գործարքների արդյունավետության ուսումնասիրություն և համապատասխանության գնահատում Հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի №391Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում №2) սահմանված լրացուցիչ պահանջներին:

Մոնիթորինգի իրականացման ժամկետը՝ 2020 թվականի դեկտեմբերի 7-ից մինչև 2021 թվականի հունվարի 29-ը:

Մոնիթորինգի մեթոդաբանությունը՝ Ընկերության գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է ընկերության կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրության, գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարի ընտրության ընթացակարգի մոնիթորինգի միջոցով:

«Սպանդարյան ՀԷԿ-ի գնդային փականի սրահի և դրենաժային սրահի հատակի սալկապատում» բաց մրցույթ

«ՔոնթրոլԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2020 թվականի գնումների պլանի հիման վրա, հիմք ընդունելով Ընկերության կողմից հաստատված գնումների կարգի 7.4.2 կետը կազմակերպել և անցկացրել է «Սպանդարյան ՀԷԿ-ի գնդային փականի սրահի և դրենաժային սրահի հատակի սալկապատում» բաց մրցույթ:

Հայտարարությունը ՀՀ ֆինանսների նախարարության էլեկտրոնային տեղեկագրում հրապարակվել է 2020 թվականի հունիսի 8-ին՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանելով 2020 թվականի հունիսի 30-ը: Մատակարարման պայմանագրի կատարման ժամկետ է սահմանվում այն ուժի մեջ մտնելու օրվանից 60 օրացուցային օր:

Մրցույթի հայտարարումից հետո բաց առաջարկների հարցման հրավերին համապատասխան կարգով հայտ է ներկայացրել երկու մասնակից՝ «Հիդրո» և «Անգոռ-Շին» ՍՊԸ-ները:

2020 թվականի հունիսի 30-ին կայացած տեխնիկական առաջարկների գնահատման նիստի ընթացքում մրցութային հանձնաժողովի կողմից մասնակիցների ներկայացրած տեխնիկական առաջարկները գնահատվել են որպես հրավերի և գնումների ուղեցույցի պահանջներին համապատասխան և հնարավորություն է տրվել մասնակցել էլեկտրոնային եղանակով գնային առաջարկ ներկայացնելու փուլին: Հարկ է նշել, որ հաղթող՝ «Անգոռ-Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է մրցույթի հրավերով պահանջվող կապալառուի գնահատման ստուգաթերթը: Ներկայացված գնային առաջարկները բերված են ստորև.

Ընկերության անվանումը	Ներկայացված գնային առաջարկները մլն դրամ, առանց ԱԱՀ
1	2
«Անգոռ-Շին» ՍՊԸ	11,7
«Հիդրո» ՍՊԸ	12,2

Հաղթող է ճանաչվել «Անգոռ-Շին» ՍՊԸ-ն՝ հայտի գինը 11,7 մլն ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: Պայմանագիրը կնքվել է 2020 թվականի օգոստոսի 3-ին, մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագրի կնքման պահից 60 օրացուցային օր:

«Սպանդարյան ՀԷԿ-ի գնդային փականի սրահի և դրենաժային սրահի հատակի սալիկապատում» բաց մրցույթի փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հարկ է փաստել, որ.

1. «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ն գնման ընթացակարգի փաստաթղթերը և կատարվելիք աշխատանքների բնութագրերը կազմել է պատշաճ մակարդակով:
2. Հաղթող է ճանաչվել հրավերի պահանջները բավարարող, ամենացածր գին առաջարկած մասնակիցը:
3. Պայմանագրի կատարման ժամկետ է սահմանված պայմանագրի կնքման պահից 60 օրացուցային օր:



**ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՆՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ**

Ընկերության անվանում «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ

Գնման անվանումը «Սպանդարյան ՀԷԿ-ի գնդային փականի սրահի և դրենաժային սրահի հատակի սալիկապատում»

Գնման ծածկագիրը 21/20

Գնման ձևը Բաց մրցույթ

ԲՈԼՈՐ ՓՈՒԼԵՐԸ

Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
1 Համարժեք և համապատասխան գրառումները պահպանվում են գնումների գործընթացի ողջ ընթացքում և մոնիթորինգ իրականացնելու համար բավարար տեղեկատվություն են պարունակում	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	

ԳՆՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
2 Գնման հայտը հաստատել է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված անձը	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
3 Գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրությունը ճիշտ է կատարվել	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
4 Մինչև գնումների հրավերների հրապարակելն իրականացվել է համապատասխան շուկայի ուսումնասիրություն	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	Ընկերությունը կազմել է նախահաշիվ հաշվի առնելով քաղաքաշինության ոլորտում գործող նորմերը և գները:

Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ	
(փաստաթղթերը կցված են)					
5	Գնման գործընթացի արդյունավետ իրականացման, ոչ մրցութային եղանակով գնումների ծավալի նվազեցման նպատակով՝ ընկերությունը իր վեբ կայքում և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակելուց բացի դիմել է արդյոք այլ միջոցների մասնակիցների շրջանակը ընդլայնելու և նրանց միջև մրցակցության խրախուսման համար			<input checked="" type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/>	Հայտարարությունը հրապարակվել է նաև iTender և armtimes.com էլեկտրոնային կայքերում:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
6	Ապահովվել են հավասար մրցակցային պայմաններ հնարավոր մասնակիցների համար			<input checked="" type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/>
7	Գնման առարկայի բնութագիրը հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը			<input type="checkbox"/> <input checked="" type="checkbox"/> <input type="checkbox"/>
8	Գնումը օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է			<input checked="" type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/>
9	Մանրամասն ներկայացված են գնման ընթացակարգի փաստաթղթերը			<input checked="" type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/>
10	Պատշաճ ձևով ներկայացված են ապրանքների տեխնիկական			<input checked="" type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/>

բնութագրերը, իսկ աշխատանքների կամ ծառայությունների դեպքում՝ ամբողջական նկարագրությունը

- 11 Ամբողջությամբ և հստակ նկարագրված են ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարմեկնաբանությունը
- 12 Գնման առարկայի հատկանիշները պահանջ կամ հղում են պարունակում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի, կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ

Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Զ/Ո	Մեկնաբանություններ
13 Հայտերի գնահատման ընթացակարգը ընթացել է արդար և անկողմնակալ	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
14 Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
15 Հայտերի գնահատման ժամանակ ապահովվել է հատուցում արժեքի դիմաց սկզբունքը	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	Ընկերությունը կազմել է նախահաշիվ հաշվի առնելով քաղաքաշինության ոլորտում գործող նորմերը և գները:
16 Պայմանագրի գնի հաշվարկը ներառում է տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը)	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Զ/Ո	Մեկնաբանություններ
17	Սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
18	Գնման պայմանագիրը կատարվել է պատշաճ մակարդակով	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
19	Գնման առարկայի արժեքը համապատասխան է շուկայական արժեքին	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	Ընկերությունը կազմել է նախահաշիվ հաշվի առնելով քաղաքաշինության ոլորտում գործող նորմերը և գները: